/Նախարարության անվանումը/

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ,
ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ՝ Գ. Գևորգյան

- **ԵՐԿԻՐ /ՔԱՂԱՔ / ԺԱՄԿԵՏ**

Ուկրաինա, Կիև, 12.11 - 15.11.2019թ.

- **ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցել Եվրամիության վիճակագրական ծառայության կողմից իրականացված **«Վարչական տվյալներով իրականացվող մարդահամարներ, ավանդական մարդահամարներից անցում դեպի ռեգիստրի վրա հիմնված կամ համակցված մարդահամարներ»** խորագրով սեմինար-դասընթացին:

Սույն դասընթացի հիմնական նպատակն էր ներկայացնել մասնակիցներին ավանդական մարդահամարից ռեգիստրի վրա հիմնված կամ համակցված մարդահամարին անցում կատարելիս հնարավոր բոլոր առավելությունները և ռիսկերը: Մասնակիցներին ծանոթացնել ավանդական մարդահամարից ռեգիստրի վրա հիմնված կամ համակցված մարդահամարին անցման մարտահրավերներին, ինչպես նաև խնդիրների լուծման տարբերակներին, որոնք առաջանում են ռեգիստրի վրա հիմնված մարդահամարին անցում կատարելիս:

- **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

Դասընթացը բաղկացած էր շնորհանդեսներից, խմբային վարժություններից և ազգային փորձի ներկայացումներից:

Շնորհանդեսներն են.

- Մոդուլ 1 - Ներկայացում

Ավանդական և ռեգիստրի վրա հիմնված մարդահամարների առավելություններն ու թերությունները

- Մոդուլ 2 – Տվյալների հավաքագրում և մշակում

  Տվյալների հավաքագրման նոր տեխնոլոգիաներ, որոնք նպաստում են ավանդական մարդահամարից անցմանը դեպի համակցված և ռեգիստրի վրա հիմնված մարդահամարի

  Ռեգիստրի վրա հիմնված և Աշխարհագրական տեղեկատվական համակարգի (GIS) վիճակագրություն, հասցեների և կացարանների ռեգիստրներ

  Խմբային քննարկումներ՝ ռեգիստրի օգտակարությունը մարդահամարի անցկացման ժամանակ թեմայով

- Մոդուլ 3 - Մեթոդաբանություն

  Ինչպես նախապատրաստել ռեգիստրները վիճակագրական նպատակներով օգտագործելու համար

  Վարչական տվյալների օգտագործում՝ ինտեգրացված էլեկտրոնային անհատական հասցեային շենքերի և կացարանների ցուցակ կառուցելու նպատակով

  Ռեգիստրներից և այլ հետազոտություններից տվյալների համակցում

- Մոդուլ 4 - Որակ

  2021 թ. շրջափուլի մարդահամարի ընթացիկ կարգավորումների ազդեցությունը ազգային զարգացման աշխատանքի ներուժի վրա՝ շնորհիվ վարչական տվյալների

- Մոդուլ 5 - Աշխարհագրական տեղեկատվական համակարգի (GIS) տեխնոլոգիան մարդահամարների ժամանակ

  GIS վերջին զարգացումները՝ բարելավելու մարդահամարի գործընթացների արդյունավետությունը

  Խմբային պարապունքներ և քննարկումներ՝ GIS կարևորությունը մարդահամարների ժամանակ թեմայով

- Մոդուլ 6 - Մասնակից բոլոր երկրների (Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Ղազախստան, Ղրղստան, Մոլդովա, Տաջիկստան, Ուկրաինա, Ուզբեկստան) շնորհանդեսներ՝ նվիրված 2020 թ. շրջափուլի մարդահամարի պլաններին:

- **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Սեմինարը հնարավորություն ընձեռեց մեզ ամրապնդելու, ինչպես նաև ձեռք բերելու համապատասխան նոր գիտելիքներ մարդահամարի անցկացման մեթոդների վերաբերյալ՝ ներառյալ ավանդական մարդահամարից անցում դեպի ռեգիստրի վրա հիմնված և համակցված մարդահամարի:

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ,
ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ Գ. Գևորգյան